

# «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Գ. Ա. ՄԵՂՐՅԱՆ

Խորհրդային ժամանակաշրջանի պետության զարգացման հիմնական բնորոշ գծերից էր իշխանության և սեփականության կենտրոնացումը: Տոտալիտար (ամբողջատիրական) քաղաքական համակարգը ոտնահարում էր ինստիտուտների, կազմակերպությունների իրավունքներն ու ազատությունները: Գործնականում բացակայում էր մարդու, քաղաքացու պաշտպանության մեխանիզմը: Դա նպաստեց կառավարման ավտորիտար-բյուրոկրատական և վարչաիրամայական համակարգի ուժեղացմանը: Այս պայմաններում իրականում քաղաքացիները զրկվեցին Սահմանադրությամբ ամրագրված բոլոր իրավունքներից ու ազատություններից, իսկ ներկայացուցչական մարմինները մի կերպ պահպանեցին իրենց գոյությունը: Ամբողջ իշխանությունը (տնտեսական, քաղաքական և հոգևոր) անցավ կառավարող բյուրոկրատական վերնախավին: Այդ պատճառով աշխատավորն օտարվեց սեփականությունից, իր աշխատանքի արդյունքից և, վերջին հաշվով, մահ՝ քաղաքական գործունեությունից:

Վարչաիրամայական համակարգն իր էությանը ընդունակ չէր ապահովելու բնականոն զարգացում: Իշխանության վերնախավը շահագրգռված չէր բնակչության կենսապայմաններն արմատապես բարելավելու համար ունենալ ընդդիմություն, քանի որ կարող էին փոխվել հասարակության անդամների պահանջմունքները և նոր հետաքրքրությունների ու ազատությունների հարց առաջանալ: Այդ ամենը, անկասկած, կարող էր քայքայել իշխանության հիմքերը: Ըստ էության՝ ստեղծված պայմաններում գլխիվայր դրվեց պետության զաղափարը, ոչ թե պետությունը գոյություն ուներ մարդու պաշտպանության և նրա պահանջմունքների բավարարման համար, այլ՝ մարդը պետության:

Արդի պայմաններում հասարակական կյանքի բոլոր ոլորտների ժողովրդավարացումը հրատապ դարձրեց պետության և քաղաքացիական հասարակության փոխադարձ կապի և ֆունկցիաների բաժանման հիմնահարցը:

Ի՞նչ է իրենից ներկայացնում քաղաքացիական հասարակությունը, ո՞րն է այդ հասարակության էությունը, նրա փոխհարաբերությունը հասարակության մյուս կառուցվածքային տարրերի հետ:

Քաղաքացիական հասարակության մասին պատկերացումները անցել են երկարատև էվոլյուցիա: Այդ հասարակության գաղափարները տվել են հին հունական մտածողներ Պլատոնը («Պետություն»), Արիստոտելը («Քաղաքականություն») և ուրիշները: Պլատոնը նշում էր, որ մարդկային պահանջմունքների լավագույնս բավարարման համար անհրաժեշտ է աշխատանքը բաժանել հասարակության անդամների միջև: Նա հասարակությունը դասում էր երեք խմբի. կառավարողներ (փիլիսոփաներ), զինծառայողներ (արտադրողներ), արհեստավորներ և հողագործներ: Ընդ որում, երկրի տնտեսական, քաղաքական, ռազմական և այլ գործընթացների կառավարմանը մասնակցում էին միայն առաջին երկու խմբերը, իսկ արհեստավորներն ու հողագործները ընդհանրապես հեռացված էին քաղաքական գործընթացներից ուղղակի մասնակցությունից<sup>1</sup>:

Արիստոտելը նշում էր, որ պետությունը բնական արգասիք է, քանի որ այն արտահայտում է հասարակության շահերը, որովհետև մարդու էությունը, որպես քաղաքական էակի,

<sup>1</sup> Տե՛ս «Краткий философский словарь», под ред. М. Розенталя и П. Юдина. М., 1955, т. 375:

անխզելիորեն կապված է քաղաքացիական հասարակության և պետության հետ<sup>2</sup>: Հետևաբար, Արիստոտելի կարծիքով, քաղաքացիական հասարակությունը քաղաքացիների քաղաքական ամբողջությունն է, իսկ պետությունը՝ քաղաքացիների քաղաքական կապը, նրանց համագործակցությունը: Ըստ Արիստոտելի, քաղաքացիական ազատության, քաղաքացիական հասարակության և պետության հիմքը մասնավոր սեփականությունն է:

Քաղաքացիական հասարակության գաղափարները Վերածննդի և Ռեֆորմացիայի դարաշրջաններում համակողմանիորեն քննարկել են Ն. Մաքիավելլին, Գ. Գրոցին, XVII դարում՝ Թ. Հոբսը, Ջ. Լոկը, իսկ այնուհետև՝ XVIII--XIX դարերում, Ը. Մոնտեսքյուն, Ժ. Ժ. Ռուսոն, Վ. Հումբոլդտը, Կանտը, Հեգելը, Կ. Մարքսը և ուրիշներ: Քաղաքական մտքի այդ խոշորագույն ներկայացուցիչները, զարգացնելով քաղաքացիական հասարակության գաղափարները, տարբերում էին «քաղաքացիական հասարակություն» և «պետություն» հասկացությունները: Նրանք չէին նույնացնում քաղաքացիական հասարակությունը պետության և գոյություն ունեցող պետական կառավարման ձևերի հետ: Նրանք նշել են, որ քաղաքացիական հասարակությունը ինչ-որ մի բան է, որը գտնվում է պետությունից դուրս և պետության նկատմամբ արտաքին ամեն ինչով ընդդիմադիր, հակադրվող է: Արդեն ֆիզիոկրատները, մասնավորապես՝ Քեյսը, տարբերում էին պետություն և հասարակություն հասկացությունները: Սակայն հետագայում ևս այս երկու հասկացությունները սկզբունքորեն չեն բաժանվել: Դրանց բաժանումը այնքան էլ հեշտ չէ, քանի որ պետությունը ինքը հենց հասարակության կազմակերպման ձև է<sup>3</sup>: Մրանից, իհարկե, չի հետևում, որ հասարակական և պետական-իշխանական մեխանիզմներն ամբողջությամբ և բոլոր տեղերում համընկնում են: Այդ մտածողների մշակած տեսության հիմքում ընկած էր «բնական իրավունքի» և պետության ծագման պայմանագրային տեսության գաղափարը, որի համաձայն օրինական է այն կառավարությունը, որը կազմվել և որից ենթարկվելուն իրենց կամքով համաձայնել են բոլոր քաղաքացիները: Նրանց կարծիքով, իշխանության բացարձակացումը հասցնում է քաղաքացիական հասարակության բացասմանը:

Այս կապակցությամբ իտալացի քաղաքագետ և քաղաքական գործիչ Ն. Մաքիավելլին իր «Իշխանը» հայտնի տրակտատում գտնում էր, որ թեև պետությունը պետք է կառավարի վախի և բռնության օգնությամբ, բայց և այնպես այն պետք է պաշտպանի քաղաքացիների անձնական իրավունքները, քաղաքացիական հասարակության շահերը<sup>4</sup>: Նրա կարծիքով հասարակության կյանքին, այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են աշխատանքը, ընտանիքը, սերը, անձնական պահանջմունքների բավարարումը և այլն, պետությունը չպետք է խառնվի, միջամտի:

Թոմաս Հոբսը առաջինն է օգտագործել ներկայումս ընդունված «քաղաքացիական հասարակություն» հասկացությունը, սակայն նա նույնացնում էր քաղաքացիական հասարակությունը և պետությունը: Թ. Հոբսի կարծիքով, պետությունից դուրս իշխում է սարսափը, պատերազմը, վախը, աղքատությունը, բարբարոսությունը, վայրենությունը, տգիտությունը, մեղությունը: Միայն պետությունն է ստեղծում բանականություն, խաղաղություն, անվտանգություն, միայն նա է իրավունքի հիման վրա քաղաքացիական հասարակությանը տանում քաղաքակիրթ կարգավորվածության<sup>5</sup>:

«Քաղաքացիական հասարակություն» հասկացությունը հետագայում ճշգրտում է Ջ. Լոկը: Նա իր «Պետական կառավարման մասին» աշխատության մեջ գրել է, որ բացարձակ իշխանությունը, որտեղ էլ որ այն լինի, բավական հեռու է քաղաքացիական հասարակության տեսք ունենալուց և անհամատեղելի է վերջինիս հետ, որքան ստրկությունը մասնավոր սեփականության հետ: Ջ. Լոկը քաղաքացիական իշխանությունը դիտում էր որպես սեփականության կարգավորման և պահպանման համար օրենքներ ստեղծող մարմին, իսկ քաղաքացիական հասարակությունում գտնվող ոչ մի մարդ չպետք է այդ հասարակության օրենքներից դուրս մնա: Բոլորը պետք է ենթարկվեն քաղաքացիական հասարակությունը կարգավորող օրենքին<sup>6</sup>:

<sup>2</sup> Տե՛ս «Философский энциклопедический словарь», М., 1989, էջ 37:

<sup>3</sup> Տե՛ս «Политология для юристов», курс лекций под. ред. Н. И. Матузова и А. В. Малько, М., 1999, էջ 347:

<sup>4</sup> Տե՛ս Н. Макиавелли, Государь, М., 1990:

<sup>5</sup> Տե՛ս Т. Гоббс, Левиафан или о сущности и форме власти, М., 1868:

<sup>6</sup> Տե՛ս Дж. Локк, О государственном правлении. Избр. произв. в 2-х томах, т. 2, М., 1960:

Ը. Մոնտեսքյուն իր «Օրենքների ոգու մասին» աշխատության մեջ շարադրում է իշխանությունների տարանջատման և քաղաքացիական հասարակության հարցերը: Ըստ էության, նա առաջինն էր, որ մշակեց իրավական պետության հայեցակարգը: Նա ձևակերպել է «բուլլատրվում է այն ամենը, ինչը արգելված չէ օրենքով» ազատության հասկացությունը: Ը. Մոնտեսքյոյի կարծիքով, քաղաքացիական հասարակությունը մարդկանց՝ մեկը մյուսի նկատմամբ թշնամության հասարակությունն է, այդ պատճառով էլ այն վերածվում է պետության՝ քաղաքացիների միջև թշնամությունը վերացնելու համար բռնության մարմնի<sup>7</sup>:

Ժ. Ժ. Ռուսոն քաղաքացիական հասարակությունը հասարակական դաշինքի միջոցով տեսնում էր պետության ձևափոխման մեջ: Ժողովրդավարության հիմնական սկզբունքը նա համարում էր ժողովրդի ինքնիշխանությունը, պետության մեջ նրա գլխավորությունն ու լիիշխանությունը: Այդ սկզբունքի կենսագործումը նշանակում է հասարակության բոլոր անդամների մասնակցությունը ընդհանուր գործերի կառավարման և ժողովրդի կողմից լիազորված գործադիր իշխանության գործունեության վերահսկողություն: Հակառակ դեպքում քաղաքացիական հասարակության պահանջով կառավարությունը կարող է լուծարվել ցանկացած ժամանակ: Նա նշում էր, որ քաղաքացիական կառավարության դեպքում կարող է հնազանդություն լինել, իսկ միայն ազատության առկայության դեպքում (առանց հնազանդության) ստացվում է ամբողջավարություն, անարխիա<sup>8</sup>:

Քաղաքացիական հասարակության էության մասին արժեքավոր մտքեր ունի Վ. Հումբոլդտը: Նա իր «Պետության գործունեության սահմանների մասին» աշխատության մեջ համակարգված ձևով առանձնացնում է պետության և քաղաքացիական հասարակության միջև առկա երեք հիմնական տարբերություն:

Նախ՝ ներքևից, հենց անհատների, քաղաքացիական հասարակության կողմից ձևավորվող ազգային, հասարակական հիմնարկների համակարգ և պետական ինստիտուտների համակարգ:

Երկրորդ՝ քաղաքացիական հասարակությունում բնական ու ընդհանուր իրավունք և պետության կողմից սահմանվող պոզիտիվ իրավունք:

Երրորդ՝ մարդու և քաղաքացու հասկացությունները:

Նրա մոտեցման հիմնական բովանդակությունն այն է, որ «պետական կարգը ինքնանպատակ չէ, այն միայն մարդու մտավոր ու ֆիզիկական ընդունակությունների զարգացման միջոց է»<sup>9</sup>:

Հեզելը քաղաքացիական հասարակությունը բնութագրում էր որպես քաղաքացիական իրավունքով փոխադարձաբար կարգավորվող, պետությունից հարաբերականորեն անկախ առանձին անհատների, սոցիալական խմբերի և ինստիտուտների ամբողջություն<sup>10</sup>: Քաղաքացիական հասարակությունը, նշել է Հեզելը, առաջին հերթին պահանջմունքների համակարգ է, որը հիմնված է մասնավոր սեփականության, ինչպես նաև կրոնի, ընտանիքի, մշակույթի, կրթության, օրենքների և սրանից բխող սուբյեկտների փոխադարձ իրավական հարաբերությունների վրա: Քաղաքացիական հասարակության մեջ յուրաքանչյուրն ինքն իր համար նպատակ է, մյուսները՝ ոչինչ: Սակայն առանց մյուսների հետ հարաբերություններ ունենալու մարդը չի կարող ամբողջությամբ իրականացնել իր նպատակները<sup>11</sup>:

Կ. Մարքսը քաղաքացիական հասարակությունը և պետությունը դիտարկում էր դրանց միասնության և հակասության մեջ: Նախ՝ քաղաքացիական հասարակությունը և պետությունը որպես երկու թշնամի բանակներ: Երկրորդ՝ քաղաքացիական հասարակությունը և պետությունը որպես երկու բարեկամ բանակներ: Երրորդ՝ հակամարտության ընթացքում մեկը դառնում է հաղթող և արծակում մյուսի բանակը: «Վերցրեք արտադրության, փոխանակման և սպառման զարգացման մի որոշակի աստիճան, — գրել է Մարքսը, — և դուք կըստանաք որոշակի հասարակարգ, ընտանիքի, դասերի կամ դասակարգերի որոշակի կազմակերպություն, մի խոսքով, որոշակի քաղաքացիական հասարակություն: Վերցրեք որոշա-

<sup>7</sup> St'u Ш. Монтескье, О духе законов. Избр. произв., М., 1955:

<sup>8</sup> St'u Ж. Ж. Руссо, Общественный договор, М., 1976:

<sup>9</sup> В. Гумбольд. Язык и философия культуры, М., 1985, с. 46.

<sup>10</sup> St'u Г. Гегель, Философия и право, М., 1934, 262-263:

<sup>11</sup> St'u «Политология для юристов», էջ 336:

կի քաղաքացիական հասարակություն և դուք կստանաք որոշակի քաղաքական կարգ, որը քաղաքացիական հասարակության սոսկ պաշտոնական արտահայտությունն է»<sup>12</sup>:

Ա. Գրամշին XX դարի առաջին կեսին սահմանում էր քաղաքացիական հասարակության երեք տիպ:

1) տնտեսական (տնտեսական ինստիտուտների համակարգ).

2) քաղաքական (ռազմական, ոստիկանական, իրավական վերնաշերտի այն մասերի ամբողջությունը, որն իրականացնում է հարկադրման և ենթարկման ֆունկցիաներ).

3) քաղաքացիական (լծակների և մարմինների ամբողջությունը, որը համակարգում է բարոյական և գաղափարական արժեքները):

«Քաղաքացիական հասարակություն» հասկացությունը, գիտության ժամանակակից պահանջներից ելնելով, օգտագործվում է ինչպես լայն, այնպես էլ նեղ իմաստով: Լայն իմաստով քաղաքացիական հասարակությունը «այն ամենն է, ինչին չի հասնում պետության ձեռքը»: Այն ծագում և հասարակության զարգացման ընթացքում փոփոխվում է որպես ինքնավար և պետությունից անմիջական կախվածություն չունեցող ամբողջություն: Լայն իմաստով քաղաքացիական հասարակություն կարող է լինել ոչ միայն ժողովրդավարական, այլև ավտորիտար, ամբողջատիրական քաղաքական վարչակարգերի ժամանակ:

Նեղ իմաստով քաղաքացիական հասարակությունը անխզելի կապի մեջ է իրավական պետության հետ: Դրանցից յուրաքանչյուրը պայմանավորում է մյուսի զարգացումը: Առանց քաղաքացիական հասարակության չկա նաև իրավական պետություն, քանի որ վերջինս պետք է արտահայտի քաղաքացիական հասարակության շահերը: Քաղաքացիական հասարակությունը ժողովրդավարական և իրավական պետության պայմաններում ազատ և իրավահավասար անհատների (առանց պետության միջամտության) փոխհարաբերությունների ամբողջություն է, մասնավոր շահերի խաղի և անհատականության ոլորտ<sup>13</sup>:

Քաղաքացիական հասարակությունը, ինչպես նշվեց, իր մեջ ներառում է այն հարաբերությունների ամբողջությունը, որը զարգանում է առանց պետության միջամտության: Այս հարաբերությունների արդյունքում յուրահատուկ շահերի հիմքի վրա ձևավորվում և պետությունից դուրս ծավալվում է գործունեություն անհատների և նրանց խմբերի շահերն արտահայտող տարբեր միությունների ու կազմակերպությունների միջև: Սննդի, հագուստի, բնակարանի և այլնի նկատմամբ իրենց պահանջները բավարարելու համար մարդիկ մղտնում են արտադրական հարաբերությունների մեջ: Երեխաներ ունենալու, նրանց դաստիարակելու, հոգևոր պահանջները բավարարելու հարաբերություններն իրականացվում են այնպիսի ինստիտուտների միջոցով, ինչպիսիք են ընտանիքը, եկեղեցին, կրթական և գիտական հաստատությունները, ինքնագործ և ստեղծագործական միությունները, մարզական կազմակերպությունները և ուրիշներ:

Քաղաքացիական հասարակությունն ունի նաև իր քաղաքական մասնակցության պահանջները: Դրանք կապված են հասարակության անդամների քաղաքական նախասիրությունների և արժեքային կողմնորոշումների հիմքի վրա ձևավորված քաղաքական ընտրությունների հետ: Չէ՞ որ անհատն ունի որոշակիորեն ձևավորված քաղաքական կողմնորոշում: Անհատների, սոցիալական խմբերի քաղաքական նախասիրություններն իրականացվում են քաղաքական կուսակցությունների և զանազան շարժումների միջոցով:

Այսպիսով, ընդհանրացնելով քաղաքացիական հասարակության մասին պատկերացումներն ու տեսությունները, կարելի է առանձնացնել նրա հետևյալ բնորոշ գծերը:

— Քաղաքացիական հասարակությունը մի այնպիսի սոցիալական տարածություն է, որտեղ մարդիկ փոխներգործում են որպես մեկը մյուսից և պետությունից անկախ անհատներ, լիիրավ քաղաքացիներ, քաղաքականության սուբյեկտներ: Այդ հասարակության հիմքը, զլխավոր գործող անձը քաղաքակիրթ, ինքնագործ անհատն է:

— Քաղաքացիական հասարակությունում առկա են մասնավոր սեփականությունը, մարդու տնտեսական ինքնուրույնությունն ու ազատությունը, բարձր կենսամակարդակը:

— Քաղաքացիական հասարակությանը բնորոշ են հասարակական-քաղաքական

<sup>12</sup> Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, երեք հատորով, հ. 1, Երևան, 1972, էջ 708—709:

<sup>13</sup> Տե՛ս В. П. Пугачева, А. И. Соловьев, Введение в политологию, М., 1998, էջ 259:

ինստիտուտների առկայությունը, զարգացած ժողովրդավարությունը, ժողովրդի ինքնիշխանությունն ու լիիշխանությունը, պետության և հասարակական գործունեության մասին քաղաքացիների իրազեկությունը, հասարակական կարծիքի ձևավորման ազատությունը:

— Քաղաքացիական հասարակությունը (համձինս մարդկանց ինքնուրույն ընկերությունների, կազմակերպությունների) կոչված է արտահայտելու և պաշտպանելու նրանց անհատական և խմբային շահերն ու իրավունքները:

— Քաղաքացիական հասարակության բնորոշ գծերից մեկն էլ քաղաքացիական և հոգևոր մշակույթի առկայությունն է:

Հետևաբար, ինչքան զարգացած է քաղաքացիական հասարակությունը, այնքան շատ են ժողովրդավարության խորացման հիմքերը: Եվ ընդհակառակը, որքան քիչ է զարգացած քաղաքացիական հասարակությունը, այնքան շատ հավանական է ամբողջատիրական վարչակարգերի գոյությունը:

Այսպիսով, ինչպես ցույց են տալիս ժամանակակից հետազոտությունները, քաղաքացիական հասարակությունը ոչ պետական հասարակական հարաբերությունների և ինստիտուտների ամբողջությունն է, որն արտահայտում է հասարակության անդամների շահերը, նրանց բազմապիսի հետաքրքրությունները և պահանջմունքները:

**Г. Б. МЕГРЯН - К вопросу о понятии «гражданское общество».** - В современных условиях демократизации всех сфер общественной жизни стало насущной необходимостью изучение проблемы взаимосвязи и разделения функций государства и гражданского общества. Хотя в течение веков данная проблема занимала умы видных фолософов, политологов и юристов своего времени, особую актуальность она приобрела в конце XX века.

В статье предпринята попытка проанализировать важнейшие достижения политической науки в области теории гражданского общества, рассмотреть его характерные черты и сущность, опираясь на идеи основоположников и великих умов политической мысли, а также на факты исторического развития.